ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2019 թ. N 197-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 133-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

Անհետաձգելի համարվող՝ Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 46-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի «Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր» ծախսային ծրագրի՝ «Բուսաբուծության համալիր զարգացման ծրագիր» միջոցառմամբ նախատեսված 513100 «Աճեցվող ակտիվներ» հոդվածից՝ նռան տնկիների ձեռքբերման 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամի չափով գնումն իրականացնել «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ***Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***